բարձրանում ու դունաւոր հրդեհների մէջ ճախրում։

— Բարձրահասակ, լայն ուսերով, երկայն ու ոլորուն բեխերով, սրածայր մորթէ գըլխարկը մի քիչ թեքուած, արաբական կատաղի ձիի վրայ հեծած, ոսկեթամբ, կռացած մեծ սուրը մէջքին կապած, խստադէմ, բոցավառ եւ կատաղի՝ կռիւների ժամանակ, մեղմաբարոյ եւ հայրական՝ ժողովրդի հետ, հլու հաւատացեալ եկեղեցու մէջ եւ յարգանքով լեցուն՝ մոքի, գիտութեան եւ արուեստի առջեւ։

— Եւ երաժշտական եղանակաց։

— Քի՞չ բան էք կարծում։ Մտածեցէ՛ք, որ այն, ինչ որ մենք դեռ չարունակում ենք անյատուկօրէն անուանել հայութիւն, ուրիշ բան չէ, եթէ ոչ մի քանի քաղցր ճայնանիշների եւ կիսաքանդ քարերի վրայ դրոշմուած ձեւերի հեռաւոր յիշատակը։

— Դուք վտանգաւոր մարդ էք։

— Ով որ Նորքի սառորատում ծաղկած նըշենիները չի տեսել՝ ոչինչ չի տեսել։

— Արուեան փողոցում տնկուած ծառերը մի քիչ մարմին են առել, երեւում են առաջին բողբոջները։

— Նկատե՞լ էք. կառավարական հիմնարկութիւնների առջեւ տնկած ծառերը չորացել են՝ ոչ ոք ջուր չի տալիս...

— Հաւաքական տնտեսութեան բարիքները։ Կոմունիզմը բնութիւն չի սիրում։

— Հակայեղափոխակա՛ն...

— Եւ սակայն, գարունը եռացած լաւայի նման ամէն կողմից պոռթկում է։ Նայիրեան աշխարհը մոգական չունչի տակ արթնանում է. Զանգուն, Արաքսը եւ այնտեղ հեռում, խորհրդաւոր Եփրատը բոժոժներ են շարժում ու կարկաչող լոյսերի մէջ ուրախ թաւալ են գալիս։ Հայաստանը դառնում է հնչուն մի երգ. հողերի վրայից սահում են ոլորուն ալիքներ. ճառագայթները ծնծղաներ են զարնում եւ ամէն ինչ կերպարանափոխուում է։ Ամէն ինչ դառնում է ջերմութիւն, լիառատ հոսում, անդուսպ վազք...

— Ձմեռուան խոր քունից յետոյ։

— Այո՛, եւ մանաւանդ թեւերը ծալած յաղթանդամ կրծքի վրայ, երկարօրէն անշարժ, խորասուզուած, մեր երկիրը, ամիսներով ձիւնի մէջ կորած, ունկ է մատուցում խոր լաբիրինտոսներից առաջացող մրրիկներին, տապլտկուում է ցեխերի մէջ, սիրտը տալիս է անձրեւներին, ճանճրոյթի եւ տրամութեան չուրջը ոսկէ առասպելներ է հիւսում ու մի օր, յանկարծ, երբ առաջի ձիւնծաղիկը իր թեւերի բոցը տալիս է սառոյցին, նա կարկառում է իր բազուկները արեւելքից փչող տաք հոսանքներին եւ քայլում է, լեռնէ լեռ, այնպէս ինչպէս գինովցած մի հսկայ։

— Տեսնում եմ, լաւ էք տրամադրուած վաղուան ճամբորդութեան համար։

— Ի՞նչ ճամբորդութիւն։

— Վերջապէ՞ս, եկանք մեր խօսակցութեան բուն նպատակին։ Վաղը Կենդգործկոմի նախագահը գնում է Զանգեզուր...

— Բախտաւո՛ր մարդ։

— Այնքան էլ չէ։ Ձիով, դժուարին ճամբաներով, կածանների վրայ մագլցելով...

— Մե՞նք էլ...

— Չէ, մենք կ՚ընկերանանք նրան մինչեւ Նոր Բայազէտ։ Fiat-ները մեր տրամադրութեան տակ պիտի դրուին։

— Զտեսնուած բան։

— Մինչեւ Ելենովկա։ Յետոյ նաւով, ամէնքս միասին կ՚երթանք Նոր Բայազէտ. յետոյ լճի չուրջը կը պտտենք. յետոյ կղզին, յետոյ...

— Ինչքա՞ն բաներ։

— Սեւան։

— Սեւան, ամենագեղեցիկ բառերից մէկը, որ երբեք լսած եմ։ Զնայած իր պարունակած սեւ-ին, նա ինձ ներկայանում է բարձրաբարձր ու լուսաւոր, հմայիչ եւ առասպելական...

— Ռոմանտիզմ։

— Եթէ ուզում էք. ինչո՞ւ վախենալ բառերից։

— Որովհետեւ կան բառեր, որոնք թաքցընում են վտանգաւոր մտայնութիւն, միանդամայն վնասակար, յետադէմ եւ կործանիչ։

— Նոյն ճանապարհով կը վերադառնանք Երեւան։ Տասը, տասներկու հոգիից բաղկացած մի խումբ։ Իշխանութեան անդամներ եւ մի քանի մտաւորականներ՝ բանաստեղծ, նըկարիչ, դերասան, լրագրող...

— Ամբողջ մի ակադեմիա։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան